ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Սողոմոնյան Լուսինե
Քաղաքական գիտության տեսության ասպիրանտ
Երևանի պետական համալսարան

Հարահոս փոփոխվող աշխարհում անդադար տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխություններն անխուսափելի են դարձնում սկզբ դնել մշակութային, հոգևոր, տնտեսական և մի շարք այլ ոլորտների միավորմանը: Օբյեկտիվորեն ենթադրելի է նաև այս գործընթացների բաժանումն ու առանձնացումը: Մասնագիտական գրականության մեջ հանրույթների միավորման գործընթացն ընդունված է անվանել մեգահանրույթ: Այսպիսով, համաշխարհայնացման գործընթացը բաժանվեց երկու ճամբարի՝ դրա կողմնակիցների և մյուս բևեռի ներկայացուցիչների, որոնք դեմ էին դրան: Համաշխարհայնացման գործընթացի կողմնակիցները գտնում էին, որ սա լավ հնարավորություն է ազատ շուկայական հարաբերությունների, ապրանքաշրջանառության, մրցակցության մեծացման, շուկաների աշխարհագրական ընդլայնման, ներդրումների, և այլ հատկորոշիչների զարգացման համար, ինչը պետության զարգացման համար բարենպաստ պայմաններ կարող է ստեղծել: Սա, ըստ համաշխարհայնացման գործընթացի կողմնակիցների, ունի մեծ հնարավորություններ կառուցելու ավելի հուսալի և ամուր փոխհարաբերություններ համաշխարհային մարդկության համար, ինչը կկարողանա կանխել պատերազմի և բռնությունների վտանգը, քանի որ տնտեսական կայունությունը յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է հանդիսանում:

Ըստ էության, համաշխարհայնացումը բարդ երևույթ է, որն ունենալու է լայնածավալ ազդեցություն: Ուստի, պատահական չէ, որ քաղաքական դիսկուրսում այս թեման թեժ բանավեճերի նյութ է դարձել: Համաշխարհայնացումը մի կողմից վերագրվում է աշխարհի մարդկության համար տնտեսական բարգավաճման հզոր ուժ, մյուս կողմից՝ ժամանակակից «հիվանդությունների» աղբյուր, որոնք «մակաբույծներ» են հանդիսանում ազգային պետությունների համար: Գլոբալ կերպով

գործող տնտեսությունը խարխլում է ազգային տնտեսությունների հիմքերը։

Արդի աշխարհում տեղեկատվահաղորդակցային ենթակառուցվածքների, գիտության և տեխնոլոգիաների զարգացման մակարդակն ու տեմպերը, մարդկության առջև ծառացած մարդածին, բնական-տարերային, ինչպես նաև բնության և բանականության էկոլոգիայով պայմանավորված հիմնախնդիրների ծավալը միանգամայն օրինաչափ են դարձնում անվտանգության հիմնախնդրի դիտարկումը գլոբալ և տարածաշրջանային մակարդակների անբաժանելիության համատեքստում՝ դիտարկելով դրանց շղթայական կապն ու դրանից բխող ռիսկերի սիներգիկությունը։

Թեմայի արդիականությունը սերտորեն կապվում է նաև անվտանգային թեմաների ուսումնասիրությանը։ Այստեղ հարկ է նշել նորվեգացի սոցիոլոգ, խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների գիտակարգի հիմնադիր՝ Յոհան Վինսենթ Գալթունգին, որը խաղաղաշինությունը վերածեց հայեցակարգի, ինչն էլ ենթադրում է այնպիսի համակարգերի հաստատում, որոնք հանգեցնում են կայուն խաղաղության։ Վերջինս իր «Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն» գրքում տալիս է խաղաղության հետևյալ սահմանումը. «Խաղաղությունը տարածության մեջ առանց բռնության զարգացման պայմանն է»[1]։ Այստեղից հետևում է, որ նշյալ հայեցակարգը անվտանգային խոշորագույն դերակատար կարող է դառնալ, գտնել կոնֆլիկտների առաջացման պատճառները, ուղենշել դրանց խաղաղ լուծմանն ուղղված դրույթները։ Գլոբալ անվտանգության հայեցակարգի ապահովման և կայացման տեսանկյունից, բացի ուժային և ռազմաքաղաքական նշանակության կառույցներից ու դաշինքներից, գործուն են նաև խաղաղության հայեցակարգի նշանակության ու ազդեցության մեխանիզմները։ Համաձայն Գալթունգի՝ բռնությունից զերծ իրավիճակը խաղաղությունն է, այն հակամարտության կերպափոխումն է ոչ բռնի, ստեղծարար տրամաբանությամբ առաջնորդվող գործընթացի. «խաղաղարար աշխատանքը խաղաղ միջոցներով բռնության թուլացմանն ուղղված աշխատանքն է, խաղաղության ուսումնասիրությանը խաղաղարար աշխատանքի պայմանների ուսումնասիրությունն է։

---

[1] **Գալթունք Յ.,** Խաղաղություն խաղաղ միջոցներով. Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Մարդկային զարգացման կենտրոն, Եր., 2005, էջ 369։

Երկու սահմանումներն էլ մարդուն դիտարկում են որպես հասարակական էակ: Սրանով խաղաղության ուսումնասիրությունը դառնում է հասարակական գիտություն, ավելի կոնկրետ՝ կիրառական հասարակական գիտություն, դեպի արժեքային համակարգն ընդգծված ուղղվածությամբ»[2]:

Գլոբալ անվտանգությունը անվտանգության տեսակ է, որն ամբողջ մարդկության համար է: Այն ձևավորված է մարդկությանը պաշտպանելու համաշխարհային մասշտաբի վտանգներից, որոնք կարող են սպառնալիք հանդիսանալ մարդու գոյությանն ու կենսագործունեությանը, կենսապայմանների վատթարացման դեմ կանխարգելիչ գործառույթ է կատարում: Այս մարտահրավերներն առաջին հերթին ներառում են մեր ժամանակին հատուկ խնդիրներ: Հետևաբար, համամարդկային նշանակության այս հայեցակարգն անքակտելիորեն ուղղված է մոլորակի բոլոր մարդկանց սպառնացող վտանգների ռիսկերի նվազեցմանը կամ չեզոքացմանը: «Վերջին 5000 տարվա ընթացքում Երկիր մոլորակի վրա տեղի են ունեցել մոտավոր թվով 14 հազար պատերազմներ, որոնք գրեթե 5 միլիարդ մարդու մահվան պատճառ են դարձրել: Դրա հետ մեկտեղ, վերջին 3400 տարվա ընթացքում մարդկությունը ապրել է համընդհանուր խաղաղության մեջ ընդամենը 250 տարի»[3]:

Համակարգչային և տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների լայն կիրառումը համամոլորակային մարդկությանը դարձրել է ավելի իրազեկ հազարավոր կիլոմետրերի հեռավորության վրա կատարվող իրողություններին, հումանիտար կապերը դարձել են ավելի սերտ՝ անկախ ռասայական, ազգային, գաղափարախոսական, քաղաքական և կրոնական պատկանելությունից: Անընդմեջ կապն ու քաղաքակրթական փոխազդեցություններն ու մշակույթների զուգամիտումը ստեղծում են գլոբալ միասնականության ապահովման նախադրյալներ ընդդեմ գլոբալ հիմնախնդիրներից բխող սպառնալիքների: Սակայն համընդհանրայնացման գործընթացը միջազգային ասպարեզում ստեղծել է նաև դրան հակադիր՝ հակագլոբալիստական տրամադրություններ: Այս համատեքստում հատկանշական է մեջբերել Վալերի Կուլագինի հետևյալ միտքը. «Կախված սպառնալիքի ենթակա օբյեկտից և պահանջվող պաշտպանությունից, մենք կարող ենք խոսել «ան-

[2] Նույն տեղում՝ էջ 23:

[3] Глобальная безопасность: инновационные методы анализа конфликтов. Под общей редакцией Смирнова А.И. – М, 2011, с. 21.

հատական անվտանգության», «մի խումբ մարդկանց անվտանգության» (օրինակ՝ էթնիկական խմբերի), «հասարակության անվտանգության», «պետության ազգային անվտանգության», «տարածաշրջանային անվտանգության», «հավաքական անվտանգության» և համաշխարհային հանրության՝ «գլոբալ անվտանգության» մասին»[4]:

Հավաքական անվտանգության գլոբալ համակարգերի զարգացումը մեծապես կնպաստի միջազգային ահաբեկչության, զանգվածային ոչնչացման սպառազինության չկիրառմանը, բանականության և բնության էկոլոգիան խաթարող գործընթացների, ատոմակայանների անվտանգ շահագործման խնդիրներին և այլ վտանգավոր երևույթներից բխող ռիսկերի կառավարելիությանն ու վերահսկելիությանը: Վերոգրյալ վտանգների առնչությամբ միջազգային համաձայնությամբ կարելի է հասնել միայն մշակույթների կառուցողական հարաբերման, այն է թե «քաղաքակրթությունների երկխոսության» միջոցով:

Համաշխարհայնացման հիմնական նպատակը երկրներում միջազգային հարաբերությունների բարելավումն ու կարգավորումն է, տարածքային ամբողջականության պահպանումը, պատերազմների կանխումը: Այս թվարկումներից անմասն չի կարող մնալ քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունների զարգացումը: «Պատերազմը ոչ այլ ինչ է, քան պետական քաղաքականության շարունակությունն այլ միջոցներով»[5]:

Այսպիսով, պատերազմը բոլոր տեսանկյուններով հարկ է պատկերացնել ոչ թե քաղաքականությունից և այդ գործընթացներից անկախ մի հասկացություն, այլ հենց քաղաքականության գործիք: Գլոբալ անվտանգության իրականացման տեսանկյունից ևս այս պատկերացման միատարրությունն ակնհայտ է: Պրուսական գեներալ Կարլ ֆոն Կլաուզևիցը իր «Պատերազմի մասին» գրքում քաղաքականության և պատերազմի կապի մասին խոսելիս, հանգում է ծայրահեղություն ֆենոմենին: Նա նշում է, որ ատելությունն ու բիրտ ուժի կիրառումը այլ միջոցներով քաղաքականության շարունակության՝ պատերազմի, անբաժանելի ուղեկիցներն են, որոնք դրդում են մարտնչող կողմերին դեպի փոխադարձ, անկառավարելի, վարքը իռացիոնալացնող ատելության. «Ծայրահեղության օրենքը՝ թշնամուն ջախջախելու, նրան դիմադրելու հնարավորությունից զրկելու մտադրությունը, ստվերում է

---

[4] **Кулагин В. М.** “Современная международная безопасность”, Мосвка, 2012, с. 12.

[5] **Կլաուզևից Կ.,** Պատերազմի մասին: Թարգմանությամբ Ա. Տեր - Հովհաննիսյանի: Հեղինակային հրատարակություն, Եր., 2020, էջ 34:

պատերազմի քաղաքական նպատակը: Քանի որ ծայրահեղության օրենքի նվազելուն զուգընթաց թուլանում է նաև թշնամուն ջախջախելու ձգտումը, քաղաքական նպատակը կրկին գալիս է առաջին պլան»[6]: Այսպիսով ռազմագետը պնդում է այն միտքը, որ քաղաքական նպատակը պատերազմի սկզբնական շարժառիթն է, որը իռացիոնալ կերպարանք է ստանում պատերազմի ընթացքում և դրանից հետո:

Մարդու գոյության և անվտանգ ապրելու համատեքստում անվտանգության կատեգորիան ունի հիմնարար և առաջնային նշանակություն և հանդիսանում է խիստ առաջնային պահանջմունք: Համառոտ ներկայացնելով համաշխարհայնացման էության մեկնաբանման երկու ծայրահեղ տեսակետներ՝ նշենք վերջինիս վերաբերյալ արտահայտած Յու. Վոլկովի և Ա. Լյուբսկու եզրակացությունները՝ հետևյալ մեկնաբանությամբ. «Ընդհանուր առմամբ՝ ինտելեկտուալ աշխարհը բաժանվել է երկու ճամբարի: Դրանցից մեկի ներկայացուցիչների կարծիքով՝ գլոբալացումը ներառում է մի քանի ասպեկտ՝ ազգային կամ մշակութային - գաղափարական, տարածքային, տնտեսական, տեղեկատվահաղորդակցային, էթնիկ, ինչպես նաև կազմակերպական: Գլոբալացման ներկա փուլի հիմնական բովանդակությունը աշխարհի միավորումն է, միասնական մոլորակային «Ես»-ի (լատ.՝ Ego - «ես») ձևավորման ավարտը, իսկ վերջնական նպատակը՝ պատերազմների և, ընդհանրապես ցանկացած աշխարհաքաղաքական դիմակայության ավարտը: Մյուս ճամբարի ներկայացուցիչները՝ համաշխարհայնացման հակառակորդները, հայտարարում են հակառակը, որ այն գործնականում վերափոխվում է հոգևոր և մտավոր ամբողջական ստրկության, ինքնիշխանության և ազգային ինքնության կորստի: Որոշ գիտնականներ, ընդհանրապես համաշխարհայնացումը դիտարկում են որպես **քառսի դարաշրջան, նոր համաշխարհային անկարգություն** (ընդգծումը հեղինակինն է)»[7]: Այստեղ համաշխարհայնացման հակառակորդների տեսանկյունից հատկանշական է գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա Ուլրիխ Բեկի (1944-2015 թթ.) «Ի՞նչ է գլոբալիզացիան»[8] գրքի հետևյալ հատվածը, որտեղ ասվում է, որ գլոբալիզացիայի ներդրումը

---

[6] **Клаузевиц К.** О войне. Пер. с нем. М.: Эксмо; СПб.: Мидгард, 2007, с. 28.

[7] **Волков Ю., Любский А.** Основы социологии и политологии, 2011, с. 188.

[8] **Ульрих Б.** Что такое глобализация. Москва, 2001. (04.09.2023) http://kyiv-heritage-guide.com/sites/default/files/%D0%91%D0%95%D0%9A%20--%20%D0%A7%D1%82%D0%BE%20%D1%82%D0%B0%D0%BA%D0%BE%D0%B5%20%D0%B3%D0%BB%D0%BE%D0%B1%D0%B0%D0%BB%D0%B8%D0%B7%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F%201997(2001)%20304%D1%81.pdf

կրում է սպառնալիքի մեծ գործոն: Համաշխարհայնացումը նպատակ ունի թուլացնել ազգային – պետական քաղաքականությունը: Նա համաշխարհայնացումը հասարակությունների համար բնորոշում է որպես ապաքաղաքական և ապակարգավորման գործընթաց: Այս համատեքստում ցիտենք փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր և ակադեմիկոս Համլետ Ամբակումի Գևորգյանի հետևյալ միտքը. «Ազգային պետությունը որոշակի տարածքում հասարակության քաղաքական կազմակերպման բարձրագույն ձևն է և մարմնավորում է որևէ ժողովրդի ինքնորոշումը և ինքնիշխանությունը»[9]:

Համաշխարհային հասարակությունը, որը ձևավորվել է համաշխարհայնացման ընթացքում, թուլացնում է ոչ միայն տնտեսական ոլորտը, այլ կասկածի տակ է դնում ազգային պետությունների հզորությունը: «Համաշխարհային հասարակություն» դեռ չի նշանակում համաշխարհային պետական հասարակություն կամ համաշխարհային տնտեսական հասարակություն, այլ նշանակում է ոչ պետական հասարակություն, որտեղ սոցիալապես օրինականացված քաղաքականության կանոնները կորցնում են իրենց պարտավորությունները: «Առանց պետականության» մի կողմից գոյություն ունի մրցակցային պայքար ազգային հասարակությունների և ազգային պետությունների միջև, իսկ մյուս կողմից՝ կապերի խառնաշփոթ, որոնք անընդհատ փոխվում են համաշխարհային հասարակության շրջանակներում: Համաշխարհային դարաշրջանի համար ճիշտ է հետևյալը, որ ազգային պետությունները կարող են գոյություն ունենալ առանց համաշխարհային հասարակությունների, իսկ համաշխարհային հասարակությունները չեն կարող գոյություն ունենալ առանց ազգային պետությունների:

Ամերիկացի քաղաքագետ - վերլուծաբան Սամյուել Հանթինգթոնն (1927-2008) իր «Քաղաքակրթությունների բախում» գրքում, լայնորեն վերլուծելով ինքնությամբ պայմանավորված հիմնախնդիրները, հանգում է եզրակացության, որ քաղաքակրթությունների շփման կետերում բախումն անխուսափելի է. «Քաղաքակրթությունները մարդկային ցեղեր են, որոնք գտնվում են զարգացման վերին մակարդակում, և քաղաքակրթությունների բախման էությունը համաշխարհային ծավալի միջցեղային հակամարտություններն են»[10]:

---

[9] **Գևորգյան Հ.,** Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հ. Ա. Գևորգյան, Եր., Նոյան Տապան, 1997, էջ 42:

[10] **Хантингтон, С.** Столкновение цивилизаций, 2020, сс. 350-351.

Վերոնշյալ գիրքը, 20-րդ դարի 90-ական թթ.-ին համաշխարհային քաղաքագիտական մտքի լայն քննարկման առարկա դարձավ: Ի հակադրություն հանթինգթոնյան «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգի, Իրանի Իսլամական Հանրապետությունում 1995–2005 թթ. Նախագահ Մուհամադ Խաթամին համաշխարհային քաղաքականության մեջ ներմուծեց «քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը: Աշխարհը բաժանելով 9 քաղաքակրթությունների՝ արևմտյան, ուղղափառ, իսլամական, կամ մահմեդական, հնդկական, բուդդայական, կոնֆուցիական, կամ չինական, ճապոնական, աֆրիկյան, լատինաամերիկյան՝ Հանթինգթոնը հիմնավորում է, որ աշխարհում տիրող սոցիալական անհավասարությունը և շփման կետում մշակույթների միջև անհանդուրժողականության աճման տեմպերը առաջ կբերեն քաղաքակրթությունների բախման, որը պարունակում է չափազանց մեծ մարտահրավերներ: Հակամարտածին իրավիճակը բացատրվում է այն բանով, որ աշխարհի մեծ մասում տեղի է ունեցել կրոնական վերածնունդ, որը քաղաքակրթություններին ավելի է հեռացնում միմյանցից: «Քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը, ինքնին, կամուրջ է ստեղծում «Քաղաքակրթությունների բախման» ժամանակ, աշխարհում տիրող բազմամշակույթ ու բազմազգ ժողովուրդների համար, խթանելով մարդասիրական ու խաղաղասիրական ձևաչափերին, երկխոսելու միջոցով հաստատելու նոր ու բարեկեցիկ կենսապայմաններ բոլոր ժողովուրդների համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են համաշխարհայնացման գործընթացի հիմնախնդիրները, որոնք ողջ մարդկությանն են վերաբերվում: Խոսվում է նաև գլոբալ անվտանգության մասին, ինչը սերտորեն կապված է սույն վերտառությամբ հոդվածին: Փաստենք, որ 21-րդ դարում կենսական է բարձրացնել գլոբալ անվտանգության ապահովման համար միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների ազդեցիկությունը՝ մշակել հավելյալ հայեցակարգեր, որոնք ունակ կլինեն հավասարարժեք պատասխանել մարտահրավերների որակական և քանակական կերպափոխումներին՝ կանխարգելելով գլոբալ վտանգների ու սպառնալիքների թևակոխումը անդառնալիի սահմանագիծ: Սրնթաց արագությամբ զարգացող աշխարհում, ինքնին ակնհայտ է, որ այդ վտանգների առաջացման տիրույթներն ընդլայնվել

են համաշխարհայնացման գործընթացով պայմանավորված: Ուստի, հարկ է ավելի ակտիվացնել ու գործուն դարձնել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը և սեփական պետությունն այնքանով նախապատրաստել համաշխարհայնացման գործընթացներին, որ ոչ մի կերպ չվնասի ազգային արժեքներին, միևնույն ժամանակ հնարավոր դարձնի քայլել ժամանակին համընթաց: Պետությունը իրավավարչական միավոր է, որը որպես միասնական օրգանիզմ հասարակության շրջանում կարող է առաջացնել հակասություններ ու վարքագծային շեղումներ:

Բանալի բառեր: Համաշխարհայնացում, գլոբալ անվտանգություն, սպառնալիք, հակագլոբալիզացիա, խաղաղություն, անվտանգություն, քաղաքակրթություն:

ПРОБЛЕМЫ ГЛОБАЛИЗАЦИИ В СОВРЕМЕННОМ МИРЕ

Согомонян Лусине
Аспирант по теории политической науки
Ереванский Государственный Университет

РЕЗЮМЕ

В данной статье обсуждаются проблемы процесса глобализации, которые касаются человечества. Также идут разговоры о глобальной безопасности, которые тесно связаны с этой статьей.

Фактически в XXI веке крайне важно повышать эффективность мер, реализуемых международными организациями по обеспечению глобальной безопасности, разрабатывать дополнительные концепции, которые смогут в равной степени реагировать на качественные и количественные изменения вызовов, предотвращая глобальные опасности и угрозы, пересекающие границы необратимого.

В быстроразвивающемся мире, само собой разумеется, что сферы возникновения этих опасностей расширились в результате процесса глобализации.

Поэтому необходимо сделать реализацию предотвращающих мер более активной и эффективной и подготовить собственное государство к глобализационным процессам таким образом, чтобы это никоим об-

разом не нанесло вреда национальным ценностям и в то же время сделало бы возможным идти в ногу со временем.

Государство является правовой административной единицей, которая как единый организм может вызывать противоречия и поведенческие отклонения в обществе.

Ключевые слова: глобализация, глобальная безопасность, угроза, антиглобализация, мир, безопасность, цивилизация.

PROBLEMS OF GLOBALISATION IN THE MODERN WORLD

Soghomonyan Lusine
PhD in Political Theory
Yerevan State University

SUMMARY

This article discusses the issues of the globalization process, which are related to the entire humanity. There is also talk about global security, which is closely related to this article. In fact, in the 21st century it is vital to increase the effectiveness of measures implemented by international organizations to ensure global security, to develop additional concepts that will be able to equally respond to the qualitative and quantitative changes in challenges, preventing global dangers and threats from reaching the limit of irreversibility. In the rapidly developing world, it is obvious that the domains of occurrence of these dangers have expanded due to the process of globalization. Therefore, it is necessary to make the implementation of preventive measures more active and effective and to prepare the state for globalization processes in such a way that it does not harm the national values in any way, and at the same time make it possible to keep pace with time. The state is a legal administrative unit, which as a unified body can cause contradictions and behavioral deviations in society.

Keywords: Globalisation, global security, threat, anti-globalisation, peace, security, civilization.